ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010, ք.Երևան-10, Հանրապետության
Հրապարակ, Կառավարական տուն 2.
Հեռ.(011) 52-19-64.Ֆաքս (011) 52-63-65
Էլ. փոստ: minenergy@minenergy.am
Վեբ կայք: www.minenergy.am

N 07/24.1/4415-15
17.08.15թ.

ՀԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ> ՀԿ-Ի
ՆԱԽԱԳԱՀ ՏԻԿԻՆ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Ձեր № 257-4-ի և 257-5-ի
առ 10.08.2015թ.

Հարգելի տիկին Դոյդոյան

Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թ. հուլիսի 31-ի N 32 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության երկրորդ գործողությունների ծրագրի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում առկա տվյալների թվայնացում և հրապարակում» ու «Հանքարդյունաբերության թափանցիկության ապահովում» միջոցառումների իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը բանակցել է ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID) հետ և վերջինիս կողմից ստացվել է առաջարկություն Հայաստանի Հանրապետության կառավարությանը համապատասխան ֆինանսական աջակցություն ցուցաբերելու՝ Հայաստանի Հանրապետության կառավարության մասնակցությամբ նշված միջոցառումների իրականացման նպատակով՝ նախապայմանով, որ ֆինանսավորումն իրականացվելու է նշված 2 բաղադրիչների համար միաժամանակ, ինչպես նաև նշված ֆինանսական միջոցները պետք է փոխանցվեն Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության արտաբյուջետային հաշվին:

Նշված բանակցությունները ներկայումս գտնվում են վերջնական փուլում:

Հաշվի առնելով նախատեսվող միջոցառումների կարևորությունը Հայաստանի Հանրապետության համար, հատկապես հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկության, հանրային վստահության բարելավման և հանրային միջոցների առավել արդյունավետ կառավարման գործընթացներին պետության և հասարակության կողմից ներկայացվող ժամանակակից պահանջներն, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը շահագրգռված է արագացնել վերջիններիս իրականացման մեկնարկը և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID) հետ համապատասխան պայմանագրի կնքումը:

Միաժամանակ հայտնում եմ, որ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը գրությամբ դիմել է ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությանը (USAID) տրամադրելու կանխավճար սարքավորումների ձեռքբերման համար:

«Հանքարդյունաբերության թափանցիկության ապահովում» բաղադրիչի իրականացման նպատակով Համաշխարհային Բանկի կողմից ներկայացվել է «ճանապարհային քարտեզ», ըստ որի անհրաժեշտ էր Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ԱՃԹՆ-ին (EITI) անդամակցելու պաշտոնական հայտարարություն կատարել:

Հարկ է նշել, որ 2015թ. հուլիսի 28-ին ՀՀ կառավարությունում տեղի ունեցած Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի առաջին նիստի ավարտին ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանի կողմից ազդարարվել է ՀՀ կառավարության պատրաստակամությունը՝ անդամակցելու Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանը (EITI) և այդ գործընթացների համակարգումը հանձնարարվել է ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Դավիթ Հարությունյանին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԿԱՐԵՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Կատարող՝ Վարդան Վարդանյան
Հեռ. 011 32 32 72